

**MOCK ARBITRATION COMPETITION**  
**ԱՐԲԻՏՐԱԺ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ**  
**2020**

**Դատախաղ՝ 2020**

**«Ամուր» ՓԲԸ և «Ամուր»-ի Բաժնետերեր Աբել Զախվերդյան և Սեպուհ Կարապետյան**

**Ընդդեմ**

**«Բորան» ՍՊԸ**

- 1- «Ամուր» ՓԲԸ-ն («Ամուր») Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում 2014 թվականին երկու բաժնետերերի («Բաժնետերեր») մասնակցությամբ հիմնադրված ընկերություն է, որը 2016 թվականի հունիսի 15-ին ՀՀ-ում գործող «ԱԱԱ» բանկի («Բանկ») կողմից կազմակերպված նվազագույնի մասնակցելով՝ ձեռք է բերել օրական 100-ից 150 տոննա պտտենցիալ արտադրողական հնարավորությամբ ցեմենտի գործարան («Գործարան»):
- 2- Գործարանը Բանկում գրավ էր դրված նախորդ սեփականատիրոջ կողմից Բանկից ստացված վարկի դիմաց և Բանկի կողմից նվազագույնի կարգով վաճառքի էր հանվել՝ մարելու համար սեփականատիրոջ կողմից Բանկից ստացած վարկը:
- 3- Գործարանը Ամուրին փոխանցման պահին չէր շահագործվում. հիմնական վերանորոգման կարիք ուներ շենքը, հնացել էին սարքավորումները և աշխատանքը վերսկսելու համար անհրաժեշտ էր սարքավորումներն, ըստ պահանջի, վերանորոգել, փոխարինել և ընդհանրապես արդիականացնել Գործարանը: Ձեռք բերման պահին Գործարանը վերաշխատեցնելու համար պահանջվող ներդրման գումարը նախատեսվում էր 1,000,000 ԱՄՆ դոլար:
- 4- Անհրաժեշտ գումարն ապահովելու համար Ամուրը նախնական համաձայնություն էր ձեռք բերել Ռուսաստանի Դաշնությունում հիմնադրված մեծածավալ շինարարական ծրագրեր իրականացնող «Բորան» ՍՊԸ («Բորան») ընկերության հետ, որը դուստր ընկերությունների միջոցով նաև անուղղակի սեփականատերն էր ավելի քան 10 ցեմենտի փոքր և միջակ արտադրամասերի և որը պատրաստակամություն էր հայտնել, իր առաջադրած պայմանների շուրջ համաձայնություն կայանալու դեպքում՝ անհրաժեշտ 1,000,000 դոլարից 700,000 ԱՄՆ դոլարը փոխառության կարգով տրամադրել Ամուրին:
- 5- Գործարանի սեփականության իրավունքը պաշտոնապես Ամուրին փոխանցվելուց հետո՝ 2016 թվականի սեպտեմբերի 2-ին, Ամուրի Բաժնետերերի, Բորանի և Ամուրի միջև կնքված եռակողմ պայմանագրի («Պայմանագիր») արդյունքում Ամուրի ընդհանուր բաժնեմասերի 20 տոկոսը Ամուրի Բաժնետերերի կողմից (յուրաքանչյուրը 10 տոկոս) ընդամենը 10,000 ԱՄՆ դոլարի դիմաց փոխանցվել էր Բորանին: Պայմանագրում, ի թիվս այլ պայմանների, ներառված էին նաև հետևյալ հոդվածները՝
  - **Հոդված 10- Բորանը համաձայնվում է Գործարանի վերաշխատեցման նախագիծն իրականացնելու համար («Պրոյեկտ») փոխառության պայմանագրով («Փոխառության Պայմանագիր») Ամուրին տրամադրել 700,000 ԱՄՆ դոլար պայմանով, որ Ամուրի կողմից ևս առավելագույնը 300,000 դոլարի ներդրում արվի Պրոյեկտի մեջ:**

- **Հոդված 11-** Փոխառության Պայմանագիրը պետք է բորանի և Ամուրի միջև ստորագրվի Պայմանագրի թվականից երեք (3) ամսվա ընթացքում:
- **Հոդված 12-** Փոխառության գումարը բորանի կողմից Ամուրին կփոխանցվի մասնավճարներով՝ Պրոյեկտի իրականացման համար նախատեսված և Փոխառության Պայմանագրին որպես հավելված կցված ժամանակացույցում սահմանված ժամկետներում պայմանով, որ միևնույն ժամկետներում համամասնական չափով (700/300) գումարի ներդրում արվի Ամուրի կողմից Պրոյեկտի մեջ:
- **Հոդված 13-** Ամուրը պարտավորվում է Պրոյեկտն ավարտին հասցնել և Գործարանը վերաշխատեցնել Փոխառության Պայմանագրի թվականից առավելագույնը 14 ամսվա ընթացքում:
- **Հոդված 14-** Գործարանի շահագործումը կստանձնի Ամուրը, որը պարտավորվում է Գործարանի շահագործումն ու արտադրանքի վաճառքը կազմակերպել՝ հաշվի առնելով բոլոր բաժնետերերի և հատկապես բորանի շահերը:
- **Հոդված 15-** Այնքան ժամանակ մինչև ամբողջությամբ չի վերադարձվել բորանի կողմից Փոխառության Պայմանագրով Ամուրին տրամադրված գումարը, Ամուրի բոլոր բաժնետերերը համաձայնվում են, որ Ամուրի տարեկան շահույթի միայն 25 տոկոսը՝ որպես շահաբաժին, կվճարվի բաժնետերերին, իսկ մնացյալ գումարը կհատկացվի աստիճանաբար բորանին վերադարձնելու փոխառությամբ Ամուրին տրամադրված գումարը: Բաժնետերերը պարտավորվում են Ամուրի ընդհանուր ժողովում իրենց քվեարկությամբ ապահովել այս պայմանի պատշաճ կատարումը: Փոխառնված գումարն ամբողջությամբ վերադարձվելուց և բորանի հետ հաշվեփակ արվելուց հետո Ամուրի տարեկան շահույթի գումարը բաժնետերերի միջև կբաժանվի Ամուրի կանոնադրության և բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներին համաձայն:
- **Հոդված 16-** Այնքան ժամանակ, մինչև բորանին չի վերադարձվել Փոխառության Պայմանագրով Ամուրին տրամադրված ամբողջ գումարն ու վերջնական հաշվեփակ չի արվել բորանի հետ, բորանն իրավունք ունի որպես բաժնետեր ունեցած իր իրավունքներից բացի նաև իր կողմից նշանակված աուդիտորական կազմակերպության միջոցով 3 ամսյա ընդմիջումներով հաշվեքննության ենթարկել Ամուրի հաշիվները, և Ամուրը պարտավորվում է որևէ կերպ չխոչընդոտել հաշվեքննության գործընթացը:
- **Հոդված 29-** Հետևյալ դեպքերում Պայմանագրի յուրաքանչյուր կողմ իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը՝
  - (1) եթե Փոխառության Պայմանագիրը բորանի և Ամուրի միջև չստորագրվի 11-րդ հոդվածում սահմանված ժամկետում,
  - (2) եթե Պայմանագրի մյուս կողմը թերանա կատարելու այս և Փոխառության Պայմանագրով ստանձնած առանցքային կարևորություն ունեցող իր ցանկացած պարտավորություն կամ հանձնառություն,
  - (3) եթե Փոխառության Պայմանագիրը լուծվում է այդ Պայմանագրում նախատեսված պատճառներով:
- **Հոդված 30-** Հետևյալ դեպքերում բորանն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝
  - (1) եթե Ամուրը թերանա կատարել 12-րդ հոդվածում սահմանված իր պարտականությունները,
  - (2) եթե Ամուրը ավարտին չհասցնի Պրոյեկտն ու չսկսի Գործարանի շահագործումը մինչև 13-րդ հոդվածով սահմանված ժամկետի ավարտը,
  - (3) եթե Գործարանի շահագործումն ավելի քան 2 շաբաթով ընդհատվի,
  - (4) եթե Ամուրը էական թերացում ցուցաբերի Գործարանի շահագործման և արտադրանքի վաճառքի գործում:

- **Հոդված 31-** 29-րդ և 30-րդ հոդվածներում նախատեսված խախտումների դեպքում Պայմանագիրը լուծել ցանկացող կողմը պարտավոր է խախտումի մասին գրավոր տեղեկացնել Պայմանագրի մյուս կողմերին: Նշված գրության մեջ պետք է Պայմանագիրը լուծել ցանկացող կողմը մյուս կողմի խախտումը վերացնելու համար սահմանի ողջամիտ ժամկետ՝ ավելացնելով նաև իր որոշումը՝ լուծել Պայմանագիրը, եթե գրության մեջ նշված խախտումները չեն վերացվում սահմանված ժամկետում: Խախտումները նշված ժամկետում չվերացվելու դեպքում Պայմանագիրը լուծել ցանկացող կողմն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Պայմանագրի մյուս կողմերին:
  - **Հոդված 32-** Պայմանագիրը հոդված 30-ով սահմանված պատճառներով Բորանի կողմից լուծվելու դեպքում Բորանն իրավունք ունի Բաժնետերերից պահանջել հետ գնել Բորանին փոխանցված Ամուրի բաժնեմասերը՝ Բորանին վճարելով Բորանի կողմից Բաժնետերերին վճարված գումարն ու հավելյալ 30 տոկոս:
  - **Հոդված 34-** Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:
  - **Հոդված 35-** Պայմանագրի կապակցությամբ կամ դրանից բխած ցանկացած վեճ, եթե 15 օրվա ընթացքում չի լուծվում բանակցությամբ, վերջնական լուծում է ստանում արբիտրաժով՝ երեք հոգուց բաղկացած Տրիբունալի միջոցով, որում վեճի յուրաքանչյուր կողմ նշանակում է մեկ արբիտր և նշանակված արբիտրները ընտրում են երրորդին՝ նախագահող արբիտրին: Արբիտրաժն անց է կացվում Առևտրային ատրիտրաժի մասին ՀՀ օրենքի համաձայն: Արբիտրաժի վայրն է քաղաք Երևանը, լեզուն՝ հայերենը:
- 6-** 2016 թվականի նոյեմբեր 15-ին Ամուրի և Բորանի միջև կնքվում է Փոխառության Պայմանագիրը («**Պայմանագիր**») կամ «**Փոխառության Պայմանագիր**»): Փոխառության Պայմանագրի մեջ նախատեսված են հետևյալ պայմանները:
- **Հոդված 2-** Բորանը համաձայնում է առավելագույնը մինչև 700,000 ԱՄՆ դոլար փոխառության կարգով («**Վարկ**») տրամադրել Ամուրին: Վարկի գումարը տրամադրվում է Ամուրին պատկանող ցեմենտի գործարանի («**Գործարան**») բարեկարգման, արդիականացման և վերաշինարարության («**Պրոյեկտ**») ծախսերը հոգալու համար:
  - **Հոդված 3-** Վարկը Ամուրին կտրամադրվի 10 համահավասար մասնավճարներով, յուրաքանչյուրը՝ 70,000 ԱՄՆ դոլար: Վարկի առաջին մասնավճարը կվճարվի այս Պայմանագրի ստորագրման թվականին իսկ մյուս ինը մասնավճարները՝ համաձայն Պրոյեկտի աշխատանքների առաջնության համար նախատեսված և այս Փոխառության Պայմանագրին կցված Թիվ 1 Հավելվածում նախատեսված ժամանակացույցի («**Ժամանակացույց**»):
  - **Հոդված 4-** Վարկի գումարը հասանելի է միայն մինչև 2017 թվականի նոյեմբեր 14-ը, որից հետո Ամուրն այլևս իրավունք չի ունենա օգտվել Վարկի մինչև այդ թվականը չօգտագործված գումարից:
  - **Հոդված 5-** Վարկի երկրորդ և դրան հաջորդող մասնավճարների գումարից օգտվելու համար Ամուրը պարտավոր է այդ մասին գրավոր դիմում («**Դիմում**») ներկայացնել Բորանին՝ Դիմումին կցելով ապացույց, որ ավարտին է հասել ժամանակացույցով նախատեսված աշխատանքների նախորդ փուլը:
  - **Հոդված 6-** Դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ժամկետում Բորանը, Դիմումին կից ներկայացված ապացույցով բավարկված լինելու դեպքում, պարտավոր է 70,000 ԱՄՆ դոլար մուծել Ամուրի անունով ԱԱԱ բանկի («**Բանկ**») մոտ բացված հատուկ բանկային հաշվին («**Հատուկ Հաշիվ**»):

- **Հոդված 7-** Բորանի կողմից Վարկի հաշվից վճարվելիք գումարը Հատուկ Հաշվին մուծվելու թվականից երեք աշխատանքային օրվա ընթացքում Ամուրը պարտավոր է Հատուկ Հաշվին մուծել 30,000 ԱՄՆ դոլար:
- **Հոդված 8-** Հատուկ Հաշվին մուծված գումարները բացառաբար պետք է Ամուրի կողմից ծախսվեն Պրոյեկտի աշխատանքներն իրականացնելու համար: Ամուրը պարտավոր է Հատուկ Հաշվից արված բոլոր վճարումներն ու արված ծախսերի մանրամասները գրանցել Պրոյեկտին հատկացված առանձին հաշվեմատյանում և այդ ծախսերի կապակցությամբ բոլոր փաստաթղթերը պահել առանձին՝ ըստ պահանջի ստուգման համար:
- **Հոդված 9-** Հավաստիանալու համար, որ Վարկը բացառապես օգտագործվում է Պրոյեկտի աշխատանքներն իրականացնելու համար, Բորանն իրավունք ունի Ամուրին գրավոր ներկայացրած իր ներկայացուցչի միջոցով վերահսկել կատարվող աշխատանքները և երեք ամսվա կտրվածքով իր կողմից նշանակված աուդիտորների միջոցով հաշվեքննության ենթարկել Հատուկ Հաշվից արված բոլոր ծախսերն ու համապատասխան փաստաթղթերը:
- **Հոդված 10-** Վարկի օգտագործված և չմարված գումարի կապակցությամբ Ամուրը Բորանին կվճարի տարեկան 7 տոկոս տոկոսադրույքով հաշվարկված տոկոս: Տոկոսը վճարելի է Վարկի առաջին մասնավճարի թվականից հետո 3-րդ ամսվա ավարտին և այնուհետև եռամսյա ընդմիջումներով՝ մինչև Վարկի ամբողջ գումարի վերադարձն ու հաշվեփակը Բորանի հետ:
- **Հոդված 11-** Վարկի օգտագործված գումարը Ամուրի կողմից Բորանին կվերադարձվի ստորև նշված պայմանների համաձայն՝
  - (1) Գործարանի շահագործման թվականից մինչև 3 ամիս վարկի բուն գումարի հաշվին ոչ մի գումար չի վճարվի Բորանին:
  - (2) Այս հոդվածի (1)-ին կետում նշված 3 ամսվա ավարտից հետո Վարկի բուն գումարի մասնակի մարման հաշվին Բորանին կվճարվի Ամուրի Բաժնետերերի, Բորանի և Ամուրի միջև 2 սեպտեմբերի 2015-ին կնքված պայմանագրի 15-րդ հոդվածում նշված գումարները: Այս հոդվածով Բորանին վճարվելիք գումարները կմուծվեն Բանկում Բորանի անունով բացված և վարկի մարման հաշվին վճարումների համար նախատեսված հատուկ հաշվին («Վարկի Մարման Հաշիվ»):
  - (3) Այս հոդվածի (2)-րդ կետում նախատեսված գումարից բացի, Ամուրը պարտավորվում է Վարկի վերադարձը Բորանին ապահովել՝ Վարկի Մարման Հաշվին փոխանցելով Գործարանի արտադրանքի վաճառքից գոյացած գումարի 70 տոկոսը:
  - (4) Այս հոդվածի (1)-ին և (2)-րդ կետերում նշված վճարումները Վարկի Մարման Հաշվին կդադարեն, երբ Վարկի ամբողջ գումարը վերադարձված և այդ հաշվին հաշվեփակ արված լինի Բորանի հետ:
- **Հոդված 21-** Այս Փոխառության Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել այս Պայմանագիրը եթե՝
  - (1) Ամուրի Բաժնետերերի, Բորանի և Ամուրի միջև 2 սեպտեմբերի 2016-ին կնքված պայմանագիրը լուծվի նույն պայմանագրում նախատեսված պատճառով,
  - (2) Եթե այս Պայմանագրի մյուս կողմը թերանա կատարելու այս Փոխառության Պայմանագրով ստանձնած առանցքային կարևորություն ունեցող իր ցանկացած պարտավորություն կամ հանձնառություն,
- **Հոդված 22-** 21-րդ հոդվածի (2)-րդ կետում նախատեսված խախտումների դեպքում Պայմանագիրը լուծել ցանկացող կողմը պարտավոր է խախտման մասին գրավոր տեղեկացնել Պայմանագրի մյուս կողմին: Նշված գրության մեջ պետք է Պայմանագիրը լուծել ցանկացող կողմը մյուս կողմի խախտումը վերացնելու համար սահմանի ողջամիտ ժամկետ՝ ավելացնելով նաև իր որոշումը՝ լուծել Պայմանագիրը, եթե գրության մեջ նշված խախտումները չեն վերացվում սահմանված ժամկետում: Խախտումները նշված

ժամկետում չվերացվելու դեպքում Պայմանագիրը լուծել ցանկացող կողմը իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Պայմանագրի մյուս կողմին:

- **Հոդված 23-** Փոխանցման Պայմանագիրը Բորանի կողմից լուծվելու դեպքում Ամուրը պարտավոր է Բորանի գրավոր պահանջով պահանջի թվականից 15 օրվա ընթացքում Բորանին վերադարձնել Վարկի ամբողջ չմարված գումարը:
- **Հոդված 24-** Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:
- **Հոդված 25-** Պայմանագրի կապակցությամբ կամ դրանից բխած ցանկացած վեճ, եթե 15 օրվա ընթացքում չի լուծվում բանակցությամբ, վերջնական լուծում է ստանում արբիտրաժով՝ երեք հոգուց բաղկացած Տրիբունալի միջոցով, որում վեճի յուրաքանչյուր կողմ նշանակում է մեկ արբիտր և նշանակված արբիտրները ընտրում են երրորդին՝ նախագահող արբիտրին: Արբիտրաժն անց է կացվում համաձայն Առևտրային ատրիտրաժի մասին ՀՀ օրենքի: Արբիտրաժի վայրն է քաղաք Երևանը, լեզուն՝ հայերենը:
- 7- Բաժնետերի և, Փոխառության Պայմանագրերը ստորագրվելուց հետո, կողմերի միջև սկսվում է համագործակցությունը: Ամուրը սկսում է Պրոյեկտի աշխատանքները և Փոխառության Պայմանագրի ժամկետներում Բորանին է ներկայացնում Վարկի մասնավճարի վճարման համար անհրաժեշտ Դիմումը: Բորանը 9 մասնավճարների ամբողջ գումարը ժամանակին մուծում է Հատուկ Հաշվին, որին Ամուրն ավելացնում է իր կողմից վճարվելիք գումարը: Հատուկ Հաշվում մուծված ամբողջ գումարը Ամուրի կողմից ծախսվում է վճարելու համար Պրոյեկտի ծախսերը: Այս ծախսերը կանոնավոր կերպով գրանցվում են Պրոյեկտին հատկացված հատուկ հաշվեմատյաններում և պահվում են համապատասխան փաստաթղթերը, որոնք պարբերաբար ստուգում և հաստատում է Բորանի կողմից նշանակված աուդիտորը:
- 8- Վերջին մեկ մասնավճարի դեպքում, որ պետք է Հատուկ Հաշվին մուծվեր 15 սեպտեմբեր 2017 թվականին, Բորանը պահանջված գումարը չի մուծում Հատուկ Հաշվին: Ամուրն այս մասին իր 19 սեպտեմբեր 2017 թվակիր գրությամբ տեղեկացնում է Բորանին, որին Բորանը պատասխանում է 21 սեպտեմբեր 2017 թվակիր նամակով՝ բացատրելով, որ ինքը պատրաստվում է ՀՀ-ում կառուցվող հյուրանոցի շինարարական աշխատանքներն իրականացնել և, եթե Ամուրը ստանձնի լրացնել անհրաժեշտ գումարը, Բորանը պատրաստ է այն հատուցել Ամուրին՝ վերջինիս հետ կնքելով նախատեսված շինարարական պրոյեկտի համար անհրաժեշտ ցեմենտը մատակարարելու պայմանագիր:
- 9- Ամուրը 25 սեպտեմբեր 2017 թվակիր նամակով պատասխանում է, որ ինքը կապահովի պահանջված գումարի պակասորդը, բայց, անկախ Բորանի առաջարկից, իրեն է վերապահում այդ վճարման մեջ Բորանի թերացումից առաջացած պահանջի իրավունքը:
- 10- Ամուրը շարունակում է Պրոյեկտի աշխատանքները, իր կողմից բավարարելով դրանց իրականացման համար անհրաժեշտ գումարի պակասորդն, ու նախատեսված ժամկետում ավարտին է հասցնում Պրոյեկտը, և Գործարանի շահագործումը մեկնարկում է 2018 թվականի հունվարի 12-ին:
- 11- 2018 թվականի փետրվարի 19-ին Բորանը դիմում է Ամուրին՝ տեղեկացնելով, որ ինքը արդեն սկսում է իր 19 սեպտեմբեր 2017 թվակիր, գրության մեջ նշված հյուրանոցի շինարարական աշխատանքներն ու պատրաստ է իր խոստման համաձայն շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ ամբողջ ցեմենտը գնելու մասին պայմանագիր ստորագրել Ամուրի հետ:
- 12- Կողմերը սկսում են բանակցել և բանակցության արդյունքում 20 հոկտեմբեր 2018-ին կնքում են պայմանագիր («**Գնման Պայմանագիր**»), որի մեջ, ի շարս այլ պայմանների, ներառված են հետևյալ հոդվածները.



- **Հոդված 4-** Ամուրը պարտավորվում է Չնման Պայմանագրի ամբողջ տևողության ընթացքում յուրաքանչյուր շաբաթ 150 տոննա ցեմենտ վաճառել Բորանին: Ցեմենտը Բորանին կհանձնվի Բորանի կողմից նշանակված վայրում:
- **Հոդված 5-** Ամուրը պարտավորվում է Չնման Պայմանագրով Բորանին վաճառվելիք ցեմենտի արտադրության համար անհրաժեշտ ավագն ապահովել Երևանից 20 կիլոմետր հեռավորությամբ գտնվող «**Բարիջ**» անունով ճանաչված ավագի հանքից:
- **Հոդված 6-** Բորանը պարտավորվում է վաճառված և իրեն հանձնված ցեմենտի յուրաքանչյուր տոննայի դիմաց Ամուրին վճարել 150 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ («**Վաճառքի Գին**»):
- **Հոդված 7-** Զանի որ այս Չնման Պայմանագրի կատարման արդյունքում Ամուրը պարտավորվել է Բորանին վաճառել իր ամբողջ արտադրաքանակը, որի արդյունքում այն զրկվում է այն վաճառելու հնարավորությունից այլ հավանական գնորդներին, Բորանը պարտավորվում է, որ Բորանին հանձնման համար պատրաստ ցեմենտի ցանկացած բեռնաքանակի գնումը որևէ պատճառով մերժելու դեպքում պարտավոր է Ամուրին վճարել մերժված բեռնաքանակի Վաճառքի Գումարի 70 տոկոսը:
- **Հոդված 8-** Բորանը ցեմենտի յուրաքանչյուր բեռնաքանակի հանձնման թվականից առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում տվյալ բեռնաքանակի Վաճառքի Գինը բանկային փոխանցումով վճարում է Ամուրի կողմից ԱԱԱ բանկում («**Բանկ**») բացված համար 999 հաշվին:
- **Հոդված 9-** Ամուրը պարտավորվում է առանձին գրությամբ Բանկին հանձնարարել իր անունով Բանկում բացված համար 999 հաշվին Բորանի կողմից մուծված ամբողջ գումարը ստացման թվականի հաջորդ աշխատանքային օրը փոխանցել Բորանի և Ամուրի մեջ 15 նոյեմբեր 2016 թվականին ստորագրված Փոխառության Պայմանագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասում նշված Վարկի Մարման Հաշվին:
- **Հոդված 10-** Չնման Պայմանագրի ժամկետը սկսվում է Պայմանագրի կնքման թվականին և ավարտվում 2 տարի հետո՝ 20 հոկտեմբեր 2020 թվականին:
- **Հոդված 11-** Այս Չնման Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել այս Պայմանագիրը, եթե Պայմանագրի մյուս կողմը թերանա կատարելու այս Պայմանագրով ստանձնած առանցքային կարևորություն ունեցող իր ցանկացած պարտավորությունն կամ հանձնառություն, պայմանով, որ Պայմանագիրը լուծելուց առաջ պարտավոր է խախտման մասին գրավոր տեղեկացնել Պայմանագրի մյուս կողմին՝ սահմանելով ողջամիտ ժամանակ խախտումը վերացնելու համար՝ ավելացնելով նաև Պայմանագիրը լուծելու մասին իր որոշումը եթե գրության մեջ նշված խախտումները չեն վերացվում սահմանված ժամկետում: Խախտումները նշված ժամկետում չվերացվելու դեպքում Պայմանագիրը լուծել ցանկացող կողմը իրավունք ունի լուծել Պայմանագիրն՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Պայմանագրի մյուս կողմին:
- **Հոդված 12-** Չնման Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:
- **Հոդված 13-** Չնման Պայմանագրի կապակցությամբ կամ դրանից բխած ցանկացած վեճ, եթե 15 օրվա ընթացքում չի լուծվում բանակցությամբ, վերջնական լուծում է ստանում արբիտրաժով, երեք հոգուց բաղկացած Տրիբունալի միջոցով որում վեճի յուրաքանչյուր կողմ նշանակում է մեկ արբիտր և նշանակված արբիտրները ընտրում են երրորդին՝ նախագահող արբիտրին: Արբիտրաժն անց է կացվում «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Արբիտրաժի վայրն է քաղաք Երևանը, լեզուն՝ հայերենը:

**13-** Ամուրը Չնման Պայմանագրի ստորագրման հաջորդող օրը՝ 21 հոկտեմբեր 2018-ին, նամակով հանձնարարում է Բանկին իր համար 999 հաշվում Բորանի կողմից մուծված

ամբողջ գումարը մուծման թվականին հաջորդող առաջին աշխատանքային օրը փոխանցել  
նույն Բանկի մոտ Բորանի անունով բացված Վարկի Մարման Հաշվին:

- 14- Ամուրը Գնման Պայմանագրի ստորագրումից հետո՝ 25 հոկտեմբեր 2018 թվականին  
ավագի մատակարարման մասին պայմանագիր է կնքում Բարիջ ավագի հանքի  
սեփականատեր «Բարիջ» ՍՊԸ -ի հետ, որով Բարիջը պարտավորվում է իրեն պատկանող  
Բարիջ հանքից Ամուրին վաճառել Ամուրի կողմից պահանջված ավազը:
- 15- Կողմերի միջև համագործակցությունն առանց խափանման շարունակվում է մինչև 2019  
թվականի մայիսի 16-ը, երբ անհայտ պատճառով պայթյուն է տեղի ունենում Բարիջի  
հանքում, որից ծանր մարմնական վնասվածքներով տուժում է շրջակա գյուղերից հանքում  
աշխատող 3 մարդ:
- 16- 2019 թվականի մայիսի 20-ին շրջակա գյուղերի բնակիչները շրջապատում են հանքը և  
փակում դեպի հանք տանող ճանապարհը, որի արդյունքում դադարում են հանքի  
աշխատանքները: Հանքի սեփականատեր Բարիջ ընկերությունը դիմում է ոստիկանություն՝  
պահանջելով ցրել ցուցարարներին և թույլ տալ հանքին շարունակելու աշխատանքը:  
Ոստիկանության կողմից կարճ ժամանակում հանքավայր է գործուղվում մեկ ջոկատ, որի  
հրամանատարը բանակցության մեջ է մտնում ցուցարարների ղեկավարների հետ, որոնք  
կրկին մերժում են դադարեցնել շրջափակումն ու բացել ճանապարհը մինչև չպարզվեն  
պայթյունի պատճառներն ու հանքում աշխատողների անվտանգությունը ապահովող  
միջոցներ չկիրառվեն: Ոստիկանները ուժ չեն գործադրում բացելու հանքի ճանապարհը և  
առաջնորդում են ցուցարարների ղեկավարներին իրենց պահանջը ներկայացնել պետական  
պատասխանատու գերատեսչությանը:
- 17- Մինչ հանքը շարունակում է շրջապատված մնալ, ցուցարարների կողմից բողոք է  
ներկայացվում Էկոնոմիկայի նախարարություն՝ պահանջելով դադարեցնել հանքի  
շահագործումը առնվազն մինչև պարզվեն պայթյունի պատճառներն, ու հանքում կիրառվեն  
աշխատողների անվտանգությունն ապահովող պայմանները:
- 18- Դիմումի արդյունքում Էկոնոմիկայի նախարարության հրամանով ժամանակավորապես  
կասեցվում է Բարիջ հանքի շահագործման լիցենզիան: Ցրվում են ցուցարարները, բայց  
հանքի շահագործումը կասեցվում է և չի վերսկսվում:
- 19- Վերոնշյալ պատճառներով Բարիջը ավագ չի վաճառում Ամուրին և Ամուրն իր Գործարանն  
աշխատեցնելու և պարտավորությունները կատարելու նպատակով սկսում է իր  
արտադրանքի համար անհրաժեշտ ավազը գնել այլ հանքերից՝ հնարավորինս պահպանելով  
Բարիջ հանքի ավագի որակային պայմաններն ու հատկությունները:
- 20- 2019 թվականի հունիսի 30-ին, Բորանի հետ ունեցած պայմանագրի ժամանակացույցի  
համաձայն, Ամուրը Բորանին հանձնելու համար պայմանագրում նշված հանձնման կետ է  
ուղարկում 150 տոննա ցեմենտ: Բորանի աշխատակիցները ընդունում են ուղարկված  
բեռնաքանակը և ստորագրում հանձնման և ընդունման վկայականը:
- 21- 2019 թվականի հուլիսի 5-ին Ամուրը դիմում է Բանկին տեղեկանալու, թե արդյոք ստացվել է  
ցեմենտի վերջին բեռնաքանակի Վաճառքի Գինը: Բանկը տեղեկացնում է, որ անցյալ մեկ  
ամսվա ընթացքում ոչ մի գումար չի ստացվել Բորանից:
- 22- 2019 թվականի հուլիսի 6-ին Ամուրն Էլեկտրոնային գրությամբ դիմում է Բորանին և,  
հարցնելով վճարման ուշացման պատճառը, պահանջում անմիջապես կատարել վճարումը:
- 23- Բորանն իր 7 հուլիս 2019 թվակիր Էլեկտրոնային Նամակով պատասխանում է Ամուրին, որ  
ինքը տեղեկացել է, որ ցեմենտի վերջին բեռնաքանակի արտադրման համար չի  
օգտագործվել Բարիջի հանքից գնված ավազը և այդ պատճառով էլ մերժում է վճարել  
Վաճառքի Գինը:

**24- Ամուրը Բորանի նամակին պատասխանում է իր 10 հուլիս 2019 թվակիր Էլեկտրոնային նամակով՝**

- (1) Ամուրի վերջին ամիսների արտադրանքի մեջ չի օգտագործվել Բարիջ հանքի ավազը, քանի որ հանքի աշխատանքը դադարեցված է Էկոնոմիկայի նախարարության կողմից լիցենզիայի ժամանակավոր կասեցման պատճառով, որի համար Ամուրը չի կրում ոչ մի պատասխանատվություն:
- (2) Ամուրը իր պայմանագրային պարտավորությունները կատարելու համար ավազ է գնել այլ հանքից, որի ավազը որակի տեսակետից չի գիջում Բարիջի հանքի ավազին,
- (3) Բորանի ներկայացուցիչները ստացել են Բորանին ուղարկված վերջին՝ 30 հունիս 2019 թվականին ուղարկված ցեմենտը, և ստորագրել են դրա ստացման և ընդունման փաստաթուղթն առանց որևէ նշման:
- (4) Ելնելով վերոնշյալից՝ Ամուրը պահանջում է անմիջապես Ամուրի բանկային հաշվին փոխանցել չվճարված Վաճառքի Գումարը:

**25- Բորանը, իր 12 հուլիս 2019 թվակիր Էլեկտրոնային գրությամբ պատասխանում է գրելով՝**

- (1) Գնման Պայմանագրի համաձայն Բորանին հանձնվելիք ցեմենտի մեջ պետք է օգտագործված լիներ Բարիջ հանքի ցեմենտ և, քանի որ այդ պայմանը չի ապահովվել 30 հունիս 2019 թվականին Բորանին հանձնված ցեմենտի դեպքում, Բորանը պարտավոր չէ վճարել նշյալ բեռնաքանակի գինը:
- (2) Զանի որ Բորանի կողմից արված հարցադրմանն ի պատասխան Բորանին տեղեկացվել է, որ Բարիջի հանքը շարունակվում է փակ մսալ և հայտնի չէ, թե երբ կամ ընդհանրապես արդյո՞ք կվերականգնվի հանքի շահագործման լիցենզիան, պարզ է, որ Ամուրը դեռևս անհայտ ժամանակով հնարավորություն չի ունենալու ավազ գնել այդ հանքից:
- (3) Զանի որ Բորանը չի կարող անժամկետ դադարեցնել շինարարական աշխատանքները, ուրեմն և արդեն պայմանագիր է կնքել մեկ այլ ցեմենտի գործարանի հետ,
- (4) Ելնելով վերոնշյալից՝ Բորանը լուծում է Ամուրի հետ կնքած Գնման Պայմանագիրը:

**26- Ամուրը Բորանի նամակին պատասխանում է իր 14 հուլիս 2019 թվակիր Էլեկտրոնային գրությամբ՝ ասելով՝**

- (1) Բորանի կողմից Գնման Պայմանագրի լուծում օրինական չէ, քանի որ Ամուրը չի խախտել իր պայմանագրային պարտավորությունները, ժամանակին Բորանին է հանձնել հունիս 2019 թվականի համար պայմանավորված ցեմենտի քանակը, այն, որ ցեմենտի պատրաստման համար չի օգտագործվել Բարիջի հանքի ավազը Էական չէ, քանի որ հունիս ամսին Բորանին հանձնված ցեմենտը ոչ մի տեսակետից որակով չի գիջում նախորդ ամիսներին հանձնված ցեմենտին:
- (2) Բորանի ներկայացուցիչը ստորագրել է հունիս ամսին հանձնված ցեմենտի բեռնաքանակի հանձնման և ընդունման վկայականը, ուրեմն և հանձնված ցեմենտը ընդունված է Բորանի կողմից, և Բորանը պարտավոր է վճարել դրա Վաճառքի Գինը՝ 22,500 ԱՄՆ դոլարին համարժեք 33 դրամ:
- (3) Զանի որ Բորանը Գնման Պայմանագրով պարտավորվել է գնել Ամուրի երկու տարվա ամբողջ արտադրանքը, գնելուց հրաժարվելու դեպքում պարտավոր է համաձայն Գնման Պայմանագրի 7–րդ հոդվածի Ամուրին վճարել մնացյալ 16 ամիսներին վաճառքի համար նախատեսված Վաճառքի Գնի 70 տոկոսը՝ 360,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:
- (4) Բորանը նաև պարտավոր է Ամուրին փոխանցել Փոխառության Պայմանագրով նախատեսված վարկի վերջին մասնավճարը, քանի որ այն ժամանակին չվճարելով՝ խախտել է Փոխառության Պայմանագիրը և պարտավոր է իր 21 սեպտեմբեր 2017 թվակիր նամակով խոստացված հատուցումը կատարել Ամուրին:



- 27-** Բորանն Ամուրի վերոնշյալ նամակին պատասխանում է իր 16 հուլիս 2019 թվակիր էլեկտրոնային գրությամբ՝ ասելով՝
- (1) Բորանի տեսակետից Գնման Պայմանագիրը լուծված է Ամուրի կողմից պայմանագրային խախտում կատարելու պատճառով,
  - (2) Բորանը չի պատրաստվում վճարել հունիսին հանձնված ցեմենտի գինը, քանի որ այն չի համապատասխանում Գնման Պայմանագրով նախատեսված պայմաններին,
  - (3) Բորանը պատրաստ չէ վճարելու մնացյալ 16 ամիսներին հանձնվելիք ցեմենտի գնի 70 տոկոսը, քանի որ Պայմանագիրը լուծված է Ամուրի պայմանագրային խախտման պատճառով:
- 28-** Ամուրը իր 18 հուլիս 2019 թվակիր նամակով պատասխանում է Բորանին գրելով, որ Ամուրը վիճարկում է Բորանի կողմից Գնման Պայմանագիրը լուծելու կապակցությամբ բերված պատճառները և պահանջում է վերականգնել Գնման Պայմանագիրը և այդ նպատակով առաջարկում է սկսել բանակցություններ հավանական համաձայնության գալու նպատակով: Դրանով հանդերձ, քանի որ Գնման Պայմանագրից գոյացած ամբողջ հասույթն օգտագործվում է վերադարձնելու համար Բորանի կողմից Փոխանցման Պայմանագրով Ամուրին տրամադրված Վարկը, քանի դեռ շարունակվում են բանակցությունները Գնման Պայմանագրի վերականգնման ուղղությամբ, խնդրում է Բորանից համաձայնվել, որ Ամուրը ժամանակավորապես դադարեցնի Վարկի մարման հաշվին վճարվելիք գումարների մուծումը Վարկի Մարման Հաշվին, մինչև որ կողմերի միջև փոխհամաձայնությամբ լուծվեն առաջացած բարդությունները:
- 29-** Բորանը իր 21 հուլիս 2019 թվակիր գրությամբ պատասխանում է Ամուրին՝ ասելով, որ թեև Բորանը պնդում է իր դիրքորոշումը և լուծված է համարում Գնման Պայմանագիրը, սակայն՝
- (1) պատրաստ է առկա հարցերը փոխհամաձայնությամբ լուծելու համար բանակցել Ամուրի հետ և
  - (2) Ամուրին իր՝ Փոխառության Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու մեջ օժանդակելու համար այս նամակի թվականից մեկ ամիս ժամանակ է տալիս՝ Գործարանի արտադրանքի համար Նոր պայմանագրեր կնքելու, այդ կապակցությամբ անհրաժեշտ ապացույցները Բորանին ներկայացնելու և Փոխանցման Պայմանագրի 11-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար:
- 30-** Կողմերի միջև բանակցությունները սկսում են 25 հուլիս 2019-ին, տևում են 15 օր և արդյունքի չեն հասնում: Այնուհետև Բորանը իր 22 օգոստոս 2019 թվակիր գրությամբ պահանջում է Ամուրից գրավոր ապացույց ներկայացնել այն մասին, որ Բորանի կողմից տրամադրված ժամկետում կարողացել է բավարար չափով իր ցեմենտի արտադրանքի երկարաժամկետ վաճառքն ապահովել՝ վերադարձնելու համար Վարկի գումարը՝ Փոխառության Պայմանագրի պահանջների համաձայն:
- 31-** Ամուրը իր 24 օգոստոս 2019 թվակիր նամակով պատասխանում է, որ նման ապացույց ներկայացնելու պահանջ չկա Փոխառության Պայմանագրում, և ինքը պատրաստ է Վարկի մարման կապակցությամբ իր պարտավորությունները կատարել կամ դրանց կատարումն ապահովել Փոխառության Պայմանագրի և Բաժնետերերի Պայմանագրում նախատեսված պայմանների համաձայն:
- 32-** Բորանը իր 26 օգոստոս 2019 թվակիր նամակով՝ հասցեագրված Ամուրին և Ամուրի Բաժնետերերին, պատասխանում է, որ քանի որ Ամուրի կողմից չեն ներկայացվել Վարկի վերադարձն ապահովելու նպատակով ցեմենտի վաճառքն ապահովող պայմանագրեր, Բորանը՝

- (1) մեկ անգամ ևս հայտարարում է Չևման Պայմանագիրը լուծված այդ մասին նախապես տրված ծանուցման թվականին՝ 12 հուլիս 2019-ին,
  - (2) լուծում է Փոխառության Պայմանագիրը Ամուրի կողմից պայմանագրային խախտման և Վարկի վերադարձը երաշխավորող անհրաժեշտ պայմանները չսպասիովելու պատճառով և պահանջում, որ Ամուրը Վարկի չմարված ամբողջ գումարը նամակի թվականից 10 օրվա ժամկետում վերադարձնի Բորանին, և
  - (3) Փոխառության Պայմանագրի լուծման հետևանքով, Բաժնետերերի Պայմանագրի 29-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված պատճառով լուծված է հայտարարում Բաժնետերերի Պայմանագիրը և պահանջում, որ այդ Պայմանագրի 32-րդ հոդվածի պայմանների համաձայն Ամուրի Բաժնետերերի կողմից Բորանին վերադարձվի բաժնեմասերի գնման դիմաց Բաժնետերերի վճարված 10,000 ԱՄՆ դոլարը գումարած 32-րդ հոդվածում նախատեսված հավելյալ գումարը, որի ստացման դիմաց ինքը պատրաստ է Բաժնետերերին վերադարձնել նրանց կողմից Բորանին փոխանցված բաժնեմասերը:
- 33-** Ամուրը իր կողմից և որպես Բաժնետերերի լիազորված ներկայացուցիչ իր 30 օգոստոս 2019 նամակով տեղեկացնում է Բորանին, որ Բորանի նամակում նշված երեք Պայմանագրերի միակողմանի լուծումը Բորանի կողմից օրինական չէ, չի համապատասխանում նշված Պայմանագրերի պահանջներին, և Բորանը, Պայմանագրերը լուծելով խախտում է այդ Պայմանագրերում նախատեսված պայմաններն ու իր պարտավորությունները: Նույն նամակում Ամուրը կրկին անգամ առաջարկում է բանակցել առկա հարցերին ամբողջական լուծում տալու և համագործակցությունը շարունակելու համար՝ ավելացնելով, որ այլապես ինքը պարտավոր է առկա վեճերի լուծման համար դիմելու արբիտրաժի:
- 34-** Ամուրի նամակը մնում է անպատասխան:
- 35-** Բորանից պատասխան չստանալով՝ Ամուրը իր՝ 3 սեպտեմբեր 2019 թվակիր նամակով տեղեկացնում է Բորանին, որ ինքը սկսում է արբիտրաժի գործընթացը՝ միևնույն նամակում նաև նշանակելով իր արբիտրին: Բորանը Ամուրի նամակին պատասխանում է իր 6 սեպտեմբեր 2019 թվակիր նամակով, որի մեջ այն նաև նշանակում է իր արբիտրին: Ամուրի և Բորանի կողմից նշանակված արբիտրները փոխհամաձայնությամբ նշանակում են երրորդ՝ նախագահող արբիտրին:
- 36-** Արբիտրաժային Տրիբունալը իր առաջին նիստը կայացնում է 10 հոկտեմբեր 2019 թվականին և կողմերից պահանջում հայցի և պատասխանի ձևաչափով Տրիբունալին ներկայացնել իրենց դիրքորոշումները: Կողմերի դիրքորոշումները ստանալուց և քննարկելուց հետո արբիտրաժի նիստերը կայանում են 2020 թվականի մարտի 21 և 22-ին: